«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԵՏ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Հաստատություն՝ <<ԵՐԵՎԱՆԻ Հ2 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Լիլիա Մանուչարյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

1.2 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին, տնային այցեր

1.3 Ծնողական ժողովներ, առաջարկությունների արկղիկ

1.4 Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքում երեխաների լիարժեք զարգացման երաշխիքը դաստիարակող մեծահասակների սերտ համագործակցությունն է: Մանկապարտեզ հաճախող երեխայի ներդաշնակ կենսունակությունը առաջին հերթին ծնողների և մանկավարժների երկուստեք շահագրգիռ շփումն է, երկխոսությամբ հաստատվող փոխվստահելի հարաբերությունները:

Շատ կարևոր է ծնողների ակտիվ մասնակցությունը մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացում: Այդ համագործակցության արդյունքում շահում է թե' երեխան , թե ծնողը, թե ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է, ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:

Ընտանիքը ամբողջական կառույց է, ուր ձևավորվում, զարգանում և դրսևորվում են անձնային բոլոր առանձնահատկությունները:

<<Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը, նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն չափով , ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին: >>

Ռաֆֆի

Ընտանիքի դերը և ազդեցությունը երեխայի զարգացման, անհատականության ձևավորման և ողջ կյանքի վրա անժխտելի է: Ինչպես անժխտելի է այն, որ երեխայի առաջին դաստիարակը և ուսուցիչը նրա ծնողներն են, ովքեր պատասխանատու են այն միջավայրի համար, որտեղ մեծանում է իրենց երեխան:

Երեխայի զարգացման հարցում ընտանիքից հետո կարևոր գործառույթ է կատարում մանկապարտեզը, որը դառնալով գործընկեր, շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին:

Ուստի, երեխայի անհատականության ձևավորման, ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու կարևոր օղակների համագործակցությունը:

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակություն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է նախակրթարանը՝ մանկապարտեզը: Մանկապարտեզի առօրյան ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, դառնալ ավելի ինքնուրույն: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների , հետաքրքրությունների, համակրանքների և հակակրանքների տվյալ նախադպրոցական ուսումնական հաստատությունը:

Ընտանիքները լինում են շատ տարբեր և դաստիարակը ,ով աշխատելու է այդ տարբեր ընտանիքների երեխաների հետ, պարտավոր է մանրանասն ուսումնասիրել նրանց ընտանիքները :Դաստիարակը չի կարող ակնկալել,որ բոլոր ընտանիքները նույն կերպ կմասնակցեն երեխայի կրթմանը, խնամքին, դաստիարակությանը, հնարավորինս շատ ժամանակ կհատկացնեն նրանց և կաջակցեն ամենափոքր հարցերում: Դաստիարակը, ով աշխատում է երեխաների հետ պարտավոր է ծնողի հետ զրուցել, քննարկել այն բոլոր խնդիրների մասին, որոնք առնչվում են երեխային: Ծնողների հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի և տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի համբերատար, բանիմաց և հոգատար, ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի:

Ընտանիք - մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքը և մանկապարտեզը համատեղ աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Դաստիարակների և ծնողների միջև դրական հաղորդակցությունը դրական մթնոլորտ է ստեղծում երեխաների համար: Որքան սերտ և արդյունավետ լինի մանկապարտեզ – ընտանիք կապը , այնքան ավելի շատ կշահեն երեխաները:

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը:Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է նաև, որ ծնողները ևս

ընկալեն դաստիարակ- երեխա փոխհարաբերությունները, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության , դաստիարակության և զարգացման գործընթացին: ԸՆտանիքի դրական մասնակցությունը մանկապարտեզի կյանքին, նույնիսկ եթե այդ մասնակցությունը կարճատև է և ոչ պարբերական, բարձրացնում է երեխայի ինքնագնահատականը: Երեխային վստահություն է ներշնչում այն հանգամանքը, որ իր ընտանիքը հավանություն է տալիս տան աշխարհից լիովին տարբերվող այն մյուս աշխարհին, որտեղ ինքն իր օրը անցկացնում է առանց ծնողների:

Ծնողը կրթական հաստատությունում իրականացվող ծրագրի կրողն է, տարածողը, արժեքներ փոխանցողը: Եթե մանկապարտեզն ու ծնողը չհամագործակցեն, նույն արժեքների կրողը չլինեն, դրանից ոչ միայն սանի զարգացումը թերի կլինի, այլև՝ հասարակական առաջընթացը:

Ընտաիքի և մանկապարտեզի համատեղ խնդիրը երեխայի հայեցի դաստիարակությունն է, նրա հոգևոր աշխարհի հարստացումը, անձի ձևավորումը:Ընտանիքի և մանկապարտեզի միջև վստահելի, գործնական կապը ակնկալում է համամարդկային ու ազգային լավագույն հատկանիշների կրող, հասարակական ակտիվ գործիչ, բարեկիրթ մարդ-քաղաքացու դաստիարակություն :

<<Լավ մանկապարտեզը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է ընտանեկան դաս-տիարակությունը>>

Բենջամին Սփոք

Այսպիսով մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս:

Երեխայի կյանքի և դաստիարակության համար բարենպաստ պայմաններ ապահովելու, լիարժեք, ներդաշնակ անհատականության հիմքերը ձևավորելու համար անհրաժեշտ է ամրապնդել և զարգացնել մանկապարտեզի և ընտանիքի սերտ կապն ու փոխգործակցությունը:

Գլուխ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱ-ՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Նախադպրոցական մանկությունը եզակի ժամակաշրջան է մարդու կյանքում, երբ ձևավորվում և զարգանում է անձը: Միևնույն ժամանակ , սա այն ժամանակահատ-վածն է, որի ընթացքում երեխան լիովին կախված է շրջապատող մեծահասակներից՝ ծնողներից, դաստիարակներից: Հետևաբար այս տարիքում ոչ պատշաճ խնամքը, վարքային, սոցիալական և հուզական խնդիրները հետագայում հանգեցնում են ծա-նըր հետևանքների և խիստ կարևոր է, որ այս տարիքում երեխայի խնամքը պատ-շաճ կերպով իրականացվի:

Ընտանիքն ու մանկապարտեզը երկու հասարակական հաստատություններ են, ո-րոնք չեն կարող գոյություն ունենալ առանց իրար: Նրանց փոխազդեցությունը մնում է հիմնական խնդիրներից մեկը:

Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը պետք է աշխատի այնպես, որ ծնողը կարողանա հաղթահարել ավտորիտարիզմը, կարծրատիպերը և տեսնել աշխարհը երեխայի տեսանկյունից: Մեծերը պետք է հասնեն այն գաղափա-րին , որ երեխային չի կարելի համեմետել այլ երեխաների հետ: դաստիարակը պետք է կարողանա ծնողին ցույց տալ իր երեխայի զարգացման ուժեղ և թույլ կողմերը:

Ցանկացած նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքում հիմ-նականը սաների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանումն ու ամրա-պընդումն է, նրանց ստեղծագործական ու մտավոր զարգացումը:

Այս մեծ ու պատասխանատու աշխատանքը անհնար է ընտանիքից մեկուսացած, քանի որ ծնողներն իրենց երեխայի առաջին և գլխավոր դաստիարակներն են ծննդ-յան պահից սկսած և ամբողջ կյանքում: Ծնողներն պիտի հիշեն, որ մանկապարտեզը միայն օգնական է երեխայի դաստիարակության հարցում, և, հետևաբար նրանք չը-

պետք է ամբողջ պատասխանատվությունը գցեն մանկավարժի վրա և հրաժարվեն ուսումնական գործընթացից:
Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը: Երեխայի համար առաջին ու հիմնական սյունը ընտանիքն է: Ծնողների յուրաքանչյուր լավ թե վատ ներգործություն , որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա:
Դաստիարակի աշխատանքի արդյունավետությունը կախված է ծնողների փոխհարաբերությունից, ընտանիքի կյանքի ձևից: Ընտանիքում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական դաստիարակման հիմքերը: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար:
Յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի հայելին է և ծնողներն են պատասխանատու նրա հետագա կյանքի համար: Երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարության, ուշադրության, քնքշանքի,թույլերի նկատմամբ խղճահարության ու օգնելու հիմքերը: Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները, նախապատրաստվում է հետագա աշխատանքային գործունեությանը: Ընտանիքում են դաստիարակվում երեխայի ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը,հոգատարությունը:Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի տարբեր կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Ընտանիքի անդամները պետք է.

1.Ժամանակ հատկացնեն իրենց երեխային իսկապես ուշադիր հետևելու համար: Նը կատեն էմոցիոնալ հուզական դաշտը, խնամքի պակասը, նկատեն հիվանդությունը:
2. Ավելի շատ ժամանակ անց կացնեն `լսելով երեխային: հարցնեն նրան ամեն ինչի մասին՝ սկսած այն բանից, թե ինչպես են գործերը մանկապարտեզում:
3.Ծիծաղեն միասին, կատակել, զվարճանալ իր ձևով:
4.Աշխատել աշխարհին նայել երեխայի աչքերով: Հիանալ առաջին ձյունով, կամ թավալվել աշնանային տերևների
մեջ:
5.Հրաժարվեն երեկոյան կարևոր ժամերիը նվիրել արտաժամյա աշխատանքին:
6.Օրը ճիշտ սկսել, չմոռանալ հրաժեշտ տալ:

7.Համբուրել երեխային,գրկել նրան, սեղմել ձեռքը և ասել, որ սիրում եք նրան:
Երեխայի կյանքի և դաստիարակության համար բարենպաստ պայմաններ ապահովելու, լիարժեք, ներդաշնակ անհատականության հիմքերը ձևավորելու համար անհրաժեշտ է ամրապնդել և զարգացնել մանկապարտեզի և զարգացնել մանկապարտեզի և ընտանիքի սերտ կապն ու փոխգործակցությունը:
Ծնողներն առաջին մանկավարժներն են : Նրանք պարտավոր են վաղ տարիքում դնել երեխայի անհատականության ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերը: Դրան համապատասխան փոխվում է նաև նախադպրոցական ուսումնական հաստատության դիրքորոշումը ընտանիքի հետ աշխատելիս: Երեխայի դաստիարակությունն ու զարգացումը անհնար է առանց ծնողների մասնակցության: Որպեսզի ծնողները դառնան դաստիարակների, մանկապարտեզի օգնականը , անրաժեշտ է համոզել նրանց, որ նրանք հասկանան ,որ չկա ավելի հետաքրքիր և ազնիվ գործ, քան սովորել հասկանալ իրենց երեխային, և հասկանալով նրան, օգնել ամեն ինչում, լինել համբերատար և քնքուշ, և այդ ժամանակ ամեն ինչ կստացվի:
Շատ ծնողներ կարիք ունեն մանկավարժական գիտելիքների ընդլայնմանը:Նրանց հուզում է իրենց երեխաների զարգացման մասին հարցերը: Մշտապես առաջանում են նոր պահանջներ, որոնք կյանքն է թելադրում, որն էլ պահանջում է գիտելիքներ և պրակտիկ փորձ ամեն մի երեխայի, ամեն մի ընտանիքի հետ աշխատելիս:
Ընտանիքից պետք է սկսվի երեխայի դաստիարակությունը: Նա պետք է ունենա որոշակի պարտականություններ. խաղալուց հետո պետք է հավաքի խաղալիքները, օգնի մայրիկին և հայրիկին: Իհարկե կան ընտանիքներ, որտեղ նկատվում են բացթողումներ. երեխայի փոխարեն աշխատանքները կատարում են ծնողները,ավագ քույր և եղբայրը,ճիշտ չի դրված աշխատանքային դաստիարակությունը: տվյալ դեպքում երեխան սովորում է ոչինչ չանել, քանի որ իր փոխարեն կանեն ուրիշները: Երեխան չի սովորում ինքնուրույնություն և ակտիվություն:
Կան ընտանիքներ, որոնք արտաքուստ համերաշխ են, աշխատասեր, հոգատար, բաըց վատ են վերաբերվում երեխայի ցանկություններին,օրինակ չեն ցանկանում ընդունել երեխայի ընկերներին, և տվյալ երեխան ապրում է իր ընտանիքի <<նեղ աշխարհում>>:
Ակնհայտորեն անբարեկեցիկ ընտանիքում երեխայի նկատմամբ ոչ մի միասնական մոտեցում չունեն: Այստեղ երեխան դուրս է հսկողությունից: Լինում են նաև ընտա-

նեկան բռնության դեպքեր:
Կան մայրեր, որոնք երեխայի մեջ տեսում են իրենց կյանքի նպատակը և,ըստ իրենց, մեծ եռանդով զբաղվում են նրա դաստիարակությամբ: Երեխաների մեջ ամրագրում են կամակորություն, եսասիրություն, անտարբերություն : Դաստիարակը պետք է մեծ աշխատանք տանի նման մայրերի հետ,որ խուսափի մայրական կույր սիրուց առաջացող վտանգներից:
Լինում է նաև հակառակը, երբ մայրը ոչ մի ուժ ու եռանդ չի դնում երեխայի դաստիարակման մեջ, երեխան մնում է հսկողությունից դուրս և դառնում է դյուրագրգիռ, նյարդային, վիրավորված, վախկոտ: Այս դեպքում դաստիարակը պետք է խիստ ձևով ազդի ծնողի վրա, նույնիսկ տանի դաստիարակչական աշխատանքներ: Պետք է այնպես անել, որ մոր մոտ չառաջանա տհաճություն իր երեխայից և նրան հոգս չհամարի: Պետք է ցույց տալ, որ երեխան ծնողի ուրախությունն է ու կյանքի իմաստը:
Երեխայի համար հավասարապես թանկ ու սիրելի են հայրն ու մայրը,իսկ նրանցից մեկի բացակայությունը խաթարում է նրա կյանքի բնականոն հունը: Փոքրիկը դառնում է ինքամփոփ, լռակյաց,ինչպես նաև կարող է ցուցաբերել ագրեսիվ վարք, անհանդուրժողականություն: Այս դեպքում դաստիարակի աշխատանքը ամենադրժվարն է, բայց ամենաանհրաժեշտը: Երեխայի հանդեպ տարվում է անհատական աշխատանք, ցուցաբերվում է էլ ավել հոգատարություն: Զուգահեռ տարվում է աշխատանք ծնողների հետ:
Ընտանեկան դաստիարակության մանկավարժությունը դաստիարակության ամենադժվար բաժինն է: Մանկավարժական մտքի պատմության բոլոր փուլերում ընտանեկան դաստիարակության հարցերն արծարծվել են դասական մանկավարժների կողմից: Լուրջ թերություններից մեկն այն է, որ հաճախ ծնողները չեն ճանաչում իրենց երեխային, հաշվի չեն առնում նրա պահաջները, ձգտումները: Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ: Մանակապարտեզը պետք է ստեղծի միջավայր երեխայի ճիշտ զարգացման գործում և ստանձնի խաղընկերոջ դերը: Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, իմացական փոխկապակցվածությունն է: Երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում: Հաընտնվելով մանկապարտեզում

երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Նրա էմոցիոնալ դաշտում տեղի է ունենում փոփոխություն: Նրա հին խաղալիքները փոխարինվում են նորերով: Երեխայի համար մանկապարտեզում սահմանվում է հատուկ օրակարգ: Փոքրիկը զբոսնում է, խաղում, սնվում օրվա հստակ ժամերին, ստանում է իր առաջին առաջադրանքները , որոնք փորձում է ճշտությամբ կատարել: Նման պարզ խնդիրները երեխաների մոտ զարգացնում են պատասխանատվություն և ինքնուրույնություն:https://www.youtube.com/watch?v=NQwjy-QJoaU

Մանկապարտեզ հաճախելիս զարգանում են երեխայի

.սոցիալական հմտությունները

.թիմում աշխատելու հմտությունները

.խոսքային հմտությունները

.հուզական աշխարհը

Երեխան սովորում է

.հարգել դիմացինին

.ձեռք բերել նոր ընկերներ

.ծանոթանալ նոր մոտեցումների ու գաղափարների հետ

.լայնացնել աշխարհայացքը

Մանկապարտեզը հսկում է մանկավարժական խորհրդի կողմից երեխայի հստակ սահմանված օրվա ռեժիմը: Երեխայի հետ աշխատում է մասնագիտական որակավորում ստացած մանկավարժներ: Մանկապարտեզ հաճախած երեխան ավելի արագ և հեշտ է հարմարվում դպրոցին:

Մանկապարտեզ հաճախելու ցանկալի տարիքը երեք տարեկանն է, չնայած կան երեխաներ,որոնք հաճախում են մանկապարտեզ երկու տարեկանից:

Դատիարակի և ծնողների միջև փոխգործակցության կազմակերպումը նաձադպրոցական ուսումնական հաստատության ամենադժվար ոլորտներից է : Ծնողների և դաստիարակի փոխազդեցությունը գալիս է տարբեր արժեհամակարգերից: Եթե դաստիարակի համար կարևոր է, թե խմբի գործունեությունը ինչպես է կազմակերպվում (ռեժիմ,ծրագրի իրականացման ապահովում), ապա ծնողի համար ամենակարևորն այն է, թե ինչպես է իրենց երեխան <<տեղավորվում>> այդ ռեժիմի

և ծրագրի մեջ:
Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է որոշակի ընդունակությունների առկայություն՝ կառուցողական, կազմակերպչական, որոնք շատ կարևոր են մանկավարժական աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար: Հաղորդակցման ընդունակությունները հիմնականում ուղղված են երեխաների հետ վստահելի փոխհարաբերությունների և համագործակցության հաստատմանը, իսկ կազմակերպչականը նպաստում են մանկավարժի մասնագիտական գործունեության տարբեր ձևերի կազմակերպմանը, ընկերական հարաբերությունների և կոլեկտիվի ձևավորմանը:

Մանկապարտեզի կյանքում ծնողներին ներգրավելու համար դաստիարակը պետք է նախաձեռնող լինի և ուղիներ փնտրի երեխայի միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Տնօրինությունն ու դաստիարակը պետք է մշակեն հստակ նաղագծեր ընտանիքի հետ համագործակցելու և արդյունավետ աշխատելու համար:

1.2 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին

Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին և նրանց ճիշտ համագործակցությունով է պայմանավորված երեխայի անթերի զարգացումը: Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, , թե՛ ընտանիքը, , թե՛ մանկապարտեզը:
Ծնողները համարվում են երեխայի համար առաջին ուսուցիչը և օրինակ ծառայողը: Այն մարդիկ ,ովքեր անմիջապես շրջապատում են երեխային, պետք է հետևեն իրենց խոսքին և կատարած քայլերին:
Մանկապարտեզի աշխատանքային գործընթացի մեջ ծնողներին ներգրավելու համար պետք է առաջին հերթին ծնողնորին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցական և դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին, աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ: Դաստիարակը պետք է կարողանա ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումները ու շտկել
թերությունները:
Փոքրիկի հետ աշխատող դաստիարակը պետք է տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ճկուն, ստեղծագործ, բարեհամբյուր, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի նիստուկացին ավելի է հեշտացնում համագործակցությունը: Երբ ընտանիքի անդամը դրական մասնակցություն է ունենում մանկապարտեզի կյանքին, երեխայի ինքնահարգանքը մեծանում է: Դա երեխային վստահություն է ներշնչում, որ իր ընտանիքը հավանություն է տալիս մանկապարտեզին, որտեղ ինքն օրվա մի մասը անցկացնում է առանց ծնողի:
Երբեմն լինում են դեպքեր, երբ դաստիարակ-ծնող փոխհարաբերություններում անհերդաշնակություն է նկատվում, որը ծնողին հետ է պահում երեխայի ուսուցման և դաստիարակության գործին ակտիվ մասնակցությունից:

Ծնողին պարապմունքներին և կազմակերպչական աշխատանքներին ներգրավելու համար պետք է ստեղծագործ մոտեցում ցուցաբերել:
Ընտանիքին, մանկապարտեզի գործունեությանը մասնակից դարձնելու համար, կարելի է կիրառել բազում մեթոդներ, որոնք համարվում են մանկապարտեզ- ընտանիք համագործակցության կարևորագույն ուղղությունները և կօգնեն երեխային ինքնուրույն հասնել հաջողության:
Դրանք են.
Շաբաթական կամ ամսական լրատուները, որոնք տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները
Ծնողական ժողովները, համաժողովները, սեմինարները, որոնց նպատակն է դաստիարակության փորձի փոխանակումը, կրթության կամ երեխայի զարգացման փուլերին, մտահոգություններին առնչվող հարցերի քննարկումներ:
Առավոտյան հանդիպումները, որոնց ընթացքում պերք է ծնողներին նախապես ներկայացնել թեմաներ, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
Օրվա երկրորդ կեսի հանդիպումները, այդ ժամանակ դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:
Կլոր սեղան, զրույցները՝ անհատական և խմբային, խորհրդատվություններ , որոնք շատ կարևոր են , որ լինեն ոչ թե հերթական իրադարձություն, այլ լավ ընկերների, գործընկերների հանդիպում: պարզել, թե ինչ և ինչպես են նրանք ցանկանում սովորեցնել իրենց երեխաներին: Հանդիպմանը միշտ չէ, որ պետք է լսել պատրաստի պատասխաններ, առաջարկություններ, խորհուրդներ: Հանդիպումներից առաջ կարելի է օգտագործել հարցաթերթիկներ, թեսթեր: Ոչ բոլորը կարող են իրենց հոգսերի, խնդիրների մասին պատմել բոլորին: Երբեմն նրանց համար ավելի հեշտ է գրել:
Սպորտլանդիաները ևս առանց ծնողների մասնակցության չեն կարող անցնել: Ծնողները օգնում են համազգեստով և տրանսպորտով, և իհարկե բոլորը միասին անհանգստանում և ուրախանում են հաղթանակով:
Յուրաքանչյուր միջոցառման նպատակն է օգնել ծնողներին: Նախկինում եղել են տնային այցեր, բայց այժմ դա այդքան էլ կիրառելի մեթոդ չէ, որովհետև դրանք չեն

կարողացել լուծել խոշոր հիմնախնդիրներ:
Ծնողական հավաքները, հանդիպումներ, սեմինարներ պետք է անցկացնել ծնող-
ներին հարմար ժամերին,օրերին: Պետք է պահպանել սերտ կապ, զրուցել ընտանիքի
անդամների հետ առնվազն շաբաթը մեկ անգամ: Դաստիարակը պետք է հենվի ե-

րեխայի և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքի դրականորեն, լինի համ-
բերատար, պահպանի գաղտնիությունը: Դաստիարակը պետք է ունենա լավ տրա-
մադրություն, մոռանա բողոքների մասին, թույլ չտա քննադատություններ ու դիտո-
ղություններ, զգուշությամբ խորհուրդներ տա:
Մանկապարտեզի փոխգործակցությունը ընտանիքի հետ միշտ եղել է արդիական և
բարդ: Ծնողների մասնակցությունն իրենց երեխայի կյանքում օգնում է նրանց տես-
նել շատ բան:
Աշխարհը անընդհատ բարդանում է, ժամանակը չի բավականացնում մարդկային
կենդանի շփման համար: ՈՒստի դաստիարակները պետք է ծնողների հետ
մշտապես կազմակերպեն նմանատիպ միջոցառումներ, որոնք լինեն ավելի հետա-
քրքիր և կարևոր, քան ծնողների առօրյան:

1.3Ծնողական ժողովներ, առաջարկությունների արկղիկ

Ծնողական ժողովները մանկապարտեզի և ընտանիքի միջև կարևոր դեր են խաղում և հիմք են ծառայում ի ցույց դնելու այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ արծարծել սովորական աշխատանքաշին ժամերին: Ժողովներ վարելիս՝ դաստիարակը պետք է ձգտի օգնել ծնողներին: Շփման ժամանակ պետք է օգտագործվի ոչ նեղ մասնագիտական բառապաշար, որ շփումը մտերմիկ լինի: Անհրաժեշտ է ընդգծել երեխայի դրական հատկանիշները, ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոցով նրանք կարող են օգնել իրենց երեխային:Ծնողական ժողովներից հետո մանկավարժը պետք է գրի առնի ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկությունները ու քննարկված հարցերը:

Ծնողական ժողովները լինում են ընդհանուր ը խմբային:

Ընդհանուր ժողովները կազմակերպվում են տարին երկու անգամ և իրականացվում են հիմնականում մանկավարշական խորհրդի և տնօրենի գլխավորությամբ: Քննարկվում են խնդիրներ կապված նոր ուսումնական տարվա և աշխատանքների ամփոփման հետ կապված: Այս դեպքում դաստիարակը պետք է զրուցի ոչ միայն երեխաների, այլև առօրյա հոգսերի, մանկապարտեզի մշակութային կյանքի և այլ իրադարձությունների շուրջ: Պետք է օգտագործել հաղորդակցման նորաձև և մտերմիկ ոճեր: Ընդհանուր ժողովների կարելի է հրավիրել բժշկի, հոգեբանի, արվեստագետիև այլ մասնագետների:

Խմբային ժողովները անց կացվում են 2-3 ամիսը մեկ: Դաստիարակը զեկուցում է խմբի ընդհանուր կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին: Իրենց խոսքով կարող են հանդես գալ ծնողներ և այլ մասնագետներ:

Նախընտրելի է մանկապարտեզում ունենալ առաջարկությունների արկղիկ, որը հիմնականում ամրացվում է մանկապարտեզի միջանցքների պատերին, հիմք է հան-

դիսանում, որ ծնողները արտահայտեն իրենց մտահոգությունները այս կամ այն հարցի շուրջ:
Կան նաև ոչ պաշտոնական գրառումներ, որը մանկավարժը երեխայի միջոցով ուղարկում է տուն: Դրանք պարունակում են ընտանիքի անդամի համար տեղեկություններ երեխայի մասին: կարող են պարունակել նաև շնորհակալական խոսքեր մանկապարտեզի աշխատանքին այս կամ այլ կերպ մասնակցելու համար:
Պատի տեղեկատվական թերթերը օգնում են ընտանիքին միշտ թարմ տեղեկություն հաղորդելու համար: Դրանց միջոցով ազդարարվում են ժողովները, ամենօրյա դասացուցակը, ամենօրյա ճաշացանկը, ուսումնական հաստատության անցուդարձը:
Այս բոլոր միջոցառումները կատարելագործում են մանկապարտեզները: Դրանք պետք է շարունակական լինեն, որպեսզի արդյունավետ ազդեցություն գործեգործեներեխայի զարգացման վրա:

Ժողովների , հավաքների ընթացքում դաստիարակը պետք է կարողանա հասնի այն բանին, որ յուրաքանչյուր ծնող պետք է լավ գիտակցի, թե ինչ է դաստիարակում իր երեխայի մեջ: Պետք է գիտակցի,որ աշխատանքում աճում է ապագա քաղաքացի:
Ծնողն իր աշխատանքով պետք է օրինակով ծառայի երեխային: Երեխան ծնողին նայելիս պետք է տեսնի նրա աշխատասիրությունը:
Մենք դաստիարակում ենք երեխային յուրաքնչյուր պահի, նույնիսկ այն ժամանակ, երբ նայում ենք նրան: Երեխայի դաստիարակումը ավելի դյուրին է, քան վերադաստիարակումը: Դաստիարակությունը պահանջում է ավելի շատ ներուժ և համբերություն: Այս ամենը շատ ժամանակ հյուծում է ծնողին և փչացնում ծնող- երեխա հարաբերությունը: Ծնողները պետք է ավելի շատ ջանք ու եռանդ գործադրեն դժվար դաստիարակվող երեխաներին կարգի բերելու համար:

1.4 Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Ծնողությունը մեր կյանքի ամենակարևոր ոլորտն է: Մեր երեխաները մեր երկրի և աշխարհի ապագա քաղաքացիներն են: Մեր երեխաները ապագա հայրեր և մայրեր են : Նրանք նույնիսկ կլինեն իրենց երեխաների դաստիարակները: Ճիշտ դաստիա-րակումը մեր երջանիկ ծերությունն է, աղքատ դաստիարակումը մեր ապագա վիշտը: Սրանք մեր արցունքներն են , սա մեր մեղքն է այլ մարդկանց, ամբողջ աշխարհի առջև:

Անտոն Սեմյոնովիչ Մակարենկո

Ընտանիքը հասարակության բյուրեղն է: ՈՒստի հասարակության ներսում կատարվող ցանկացած փոփոխություն արձագանքում է նաև ընտանիքը: Մեր երկրում այսօր սոցիալ-տնտեսական և կրթամշակութային ոլորտները զարգացման նոր փուլ են թևակոխում: Յուրաքանչյուր ոլորտ իր փոփոխությամբ յուրովի է ազդում ընտանիքի վրա:

Ընտանիքում անընդհատ լսելով մանկապարտեզի դրական կոմերի ,նրա կարևորության և անհրաժեշտության մասին,, երեխայի մեջ ձևավորվում է ամրակայվում է այն կարծիքը,որ մանկապարտեզը շատ լան է,իրենք այնտեղ խաղալու են,երգելու և պարելու են, ,լսելու են հետաքրքիր նորություններ,ունենալու են նոր ընկերներ և մայրիկների չափ իրենց սիրող դաստիարակներ: Այսինքն ծնողը կարող է և պարտավոր է մանկկկապարտեզ հաճախող երեխայի մեջ սերմանել դաստիարակված և կիրթ լինելու սոցիալական նշանակության գիտակցությունը:
Ինչպես արդեն նշել ենք, նախադպրոցական տարիքում երեխաների լիարժեք զարգացման երաշխիքը դաստիարակող մեծահասակների սերտ համագործակցությունն

է: Մանկապարտեզ հաճախող երեխաների ներդաշնակ կենսունակությունը առաջին հերթին ծնողների և մանկավարժների երկուստեք շահագրգիռ շփումն է, երկխոսությամբ հաստատվող փոխվստահելի հարաբերությունները: մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության բազմաթիվ ձևերը նպատակ ունեն ապահովելու հոգեբանական բարեհարմարության պայմաններ, որոնք կնպաստեն երեխայի ոչ միայն հետագա զարգացմանը,այլև նոր սոցիալական միջավայրին հարմարվելու կարողությունների ձեռք բերմանը: Վերջին տարիներին ավելի հաճախակի են դարձել ծնողների բողոքներն աըն մասին,որ երեխան դժվարությամբ է հարմարվում կամ տարբեր պատճառներով հրաժարվում է մանկապարտեզ գնալուց: Ապահարմարման հիմնական պատճառը այդ ուղղությամբ տարվող մանկավարժական աշխատանքի բացակայությունն է: Ցավոք, ծնողների մեծ մասը գտնում է , որ մանկապարտեզը իրենց փրկությունն է, քանի որ այն պահից , երբ երեխան սկսում է հաճախել մանկապարտեզ, երեխայի դաստիարակության պատասխանատվությունն ընկնում է դաստիարակի ուսերին, իսկ իրենք պարտավոր են ընդամենը վերահսկել և գնահատել մանկավարժի աշխատանքը: Սովորաբար նման ծնողները դադարում են հետաքրքրքրվել երեխայի կյանքով, դժվարությունների դեպքում մեղադրում են դաստիարակներին:Նման դեպքերում ,հաշվի առնելով նաև ժամանակակից աշխատող ծնողների լարվածությունն ու ժամանակի սղությունը, նույնիսկ դաստիարակի հմուտ գործունեության պարագայում, մեծանում է երեխայի հոգեկանի զարգացման բնականոն ընթացքի խաթարման հավանականությունը: Նախադպրոցական տարիքում անփոխարինելի են ծնողների անմնացորդ նվիրումն ու գրագետ մասնակցությունը երեխայի զարգացման գործընթացին, ուստի մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի գերղնդիրը ծնողների ակտիվ ներգրավումն է դաստիարակության համակարգ և այդ ընթցքում նրանց մանկավարժական կրթության բարելավումը:
Դաստիարակը ծնողի հետ աշխատանքում պետք է սկսի մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցական դաստիարակության և ավանդական և ժամանակակից մոտեցումների հեր ծանոթացնելուց: Դաստիարակը պետք է պարզաբանի երեխայի դաստիարակության և զարգացման հեռահար առաջիկա խնդիրները տարիքային պարբերացմամբ:Դաստիարակը պետք է սովորեցնի ծնողներին խաղալ և հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումները ու շտկել թերությունները:

Ծնողներին պետք է խորհուրդ տալ երեխայի վարքը և մտահորիզոնը զարգացնելու համար

Նախադպրոցական տարիքում հիմնականում երեխայի առօրյայի մեծ մասը զբաղեց-նում է խաղը: Լավ կազմակերպված , համերաշխ ընտանիքը յամանակի ընթացքում երեխային վստահում է ավելի բարդ աշխատանքներ: Հարկավոր չէ երեխային ավելի շուտ շեղել խաղից և տեղափոխել իրական աշխարհ:Այս ամենը բռնություն է երե-խայի հանդեպ: Երեխայի խաղը ղեկավարելիս ծնողը պետք է լավ մտածի, թե ինչ է դա և ինչով է տարբերվում աշխատանքից: Խաղի և աշխատանքի միջև շատ տար-բերություն չկա, քանի որ լավ խաղը նման է լավ գործի, վատ խաղը՝ վատ գործի: Խաղը պասիվ է, երբ երեխան կրկնօրինակում է ուրիշի գործերը, իսկ ակտիվ՝ փոր-ձում է ավելի զարգացնել: Խաղը երեխային սովորեցնում է այն ֆիզիկական և մտա-վոր ջանքերը, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար: Կան ծնողներ,որոնք խաղի ժամանակ անուշադրության են մատնեում երեխային և երխային ինքնուրույն է կազմում աշխատանքը: Կան նաև ծնողներ, որոնք խաղի ժամանակ մեծ ուշադ-րություն են դարփնում երեխայի խաղին: Եթե չափը անցնում են, ապա միջամտում և խանգարում են երեխային: Պետք է նրան ազատություն տալ , որ նա իրական կյանքում էլ որևէ մեկից կախում չունենա: Միայնակ խաղի ժամանակ զարգանում են երխայի երևակայությունը, կառուցողական հմտությունները, նյութական կազ-մակերպման հմտությունները: Հետզհետե խաղի մասշտաբը պետք է ընդլայնել և երեխայի ընկերական շրջապատը նույնպես: Ժամանակի ընթացքում երեխան խաղում է ոչ միայն ծնողի հսկողության տակ ,այլև նոր ընկերների հետ՝ նոր շրջապատում: Այստեղ նա հանդես է գալիս որպես թիմի անդամ, որը ոչ միայն խաղային է , այլև՝ կրթական:

Հաճախակի զբոսնել իրենց երեխաների հետ և զրուցել ամեն ինչի մասին:

Փորձել տարբերել կերպարներ և ձևեր երկնքում սահող ամպերում;

Խնդրել երեխային ուշադիր լսել շրջապատի ձայները, հետո տարբերել դրանք:

Երեխայի համար կարևոր են գունազարդումները և նկարչությունը: Երեխային պետք է օգնել, երբ դժվարանում է ինչ-որ բան նկարել:

Աշխատանքը գնահատելիս <<Լավ >> է <<Գեղեցիկ է >> ասել, ինչպես նաև հստակ պետք է նկարագրել այն ամենյը ինչ տեսնում եք:

Պետք է երեխային թույլ տալ պատմել իր նկարածի մասին:

Հարկավոր է երեխայի համար հաճախակի կարդալ հեքիաթներ: Ընթերցանությունը պետք է լինի դանդաղ և արտահայտիչ: երեխաները սիրում են ձեռք տալ գրքին թերթել, նայել նկարները : Պետք չէ նրանց արգելել բարեկամանալ գրքի հետ:
Միշտ էլ չափազանց շատ ու բազմաբնույթ են եղել մանկապարտեզի հոգսերը, որոնք իրենց մեջ ներառել են նյութական բազայի ստեղծումից մինչև երեխաների իրավունքների պաշտպանության և անհատականության զարգացման հարցեր: Երեխաների իրավունքների պաշտպաններն են ծնողները ու դաստիարակը: Սակայն այդ հարցերով պետք է զբաղվեն ոչ միայն նրանք, այլև այլ ոլորտներ՝ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ; զանգվածային լրատվական միջոցներ, հասարակական կազմակերպություններ: Այս ամենը կտանի հասարակությանը լայն հիմնախնդիրների բացահայտման հնարավոր լուծումների որոնման և ճիշտ որոշումների կայացման://www.youtube.com/watch?v=4HfDXHS3Klk
Կարևորագույն հարցերից է երեխային մանկապարտեզին ադապտացնելը: Դաստիարակը ծնողին պետք է տա խորհուրդներ և երկուստեք պիտի համագործակցեն երեխային հեշտ և ճիշտ ադապտացնելու համար:
Պետք է երեխային որոշ ժամանակով միայնակ թողնել: Բոլոր երեխաներն էլ ունեն միայնակ մնալու հմտություններ, և ծնողի պարտականությունն է նպաստել, որ այն զարգանա: Պետք է անհանգստանալ: երբ երեխան հրաժարվում է միայնակ մնալև անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ:
Երեխային պետք է անպայման հրաժեշտ տալ և զգուշացնել , որ գնում եք: Բազում դեպքերում երեխային շեղում են դաստիարակը կամ դայակը, իսկ ծնողը թաքուն հեռանում է : աըս դեպքում երեխան ընկնում է հիստերիայի մեջ, լալիս է: Այս վարվելակերպը երեխային սթրեսի մեջ է գցում: Այս դեպքումդաստիարակը պետք է փորձի խաղի միջոցով շեղել նրա ուշադրությունը: Երեխան աստիճանաբար ադապտացվում է և որոշ ժամանակ հետո նրան շեղելու կարիք չի լինի: Երեխային մանկապարտեզին ադապտացնելու համար անհրաժեշտ է միջինից մեկից երկու շաբաթ: Երբ երեխան առաջին իսկ օրվանից հանգիստ հաճախում է պարտեզ, ապա ծնողը որևէ հոգս չունի: Հակառակ դեպքում ծնողը պիտի համագործակցի դաստիարակի հետ:Ամեն օր պարտեզում պետք է մնալու ժամանակը ավելացնել: Ծնողը պետք է լինի հետևողական, վստահի մանկավարժին և ամեն ինչ կընկնի

հունի մեջ: Այս քայլերով երեխային նախապատրաստում ենք ոչ միայն մանկապարտեզին, այլև դպրոցին և կյանքի այլ փուլերին:

Երեխայի դաստիարակության համար կարևոր նախադրյալներից է մանկապարտեզի բաց և թափանցիկ միջավայրը: Այս միջավայրում գտնվող ծնողը սկսում է ավելի լավ հասկանալ ծրագիրը, նկատել դժվարությունները, դիտել երեխայի վարքը:

Եզրակացություն

Այսպիսով երեխայի դաստիարակության հարցում մեծ է ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության դերը: Ընտանիքը, լինելով երեխայի առաջին ուսուցիչը, պետք է միշտ պատրաստակամ լինի օգնելու մանկապարտեզին: Մանկապարտեզն էլ իր հերթին պետք է ունենա կայուն փոխհարաբերություն ընտանիքի հետ, որպեսզի արդյունքում չտուժի երեխան:

Դաստիարակի աշխատանքն ընտանիքի հետ ամենադժվարն է, բայց ամենաանհրաժեշտը: Դաստիարակի աշխատանքը կունենա դրական արդյունք, եթե վերջինս լավ է տիրապետում ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին: Դրական արդյունք կստանան, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք և միասնական պահանջ երեխաների նկատմամբ:

Դաստիարակը պերք է կարողանա տալ որոշակի գիտելիքներ երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունների մասին այն ծնողներին, որոնք չունեն մանկավարժական կրթություն: Այս ամենը հնարավորություն կտա երեխաների մեջ տեսնել դրականը և բացասականը և վերլուծել նրանց արարքները:

ԸՆտանիքի և մանկապարտեզի կապը երեխաների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու կարևոր պայմաններից մեկն է : Դրա իրականացումը պահանջում է խոր գիտելիքներ, հաղորդակցական կարողություններ, հմտություններ :

Ծնողի հեր արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի և տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, համբերատար:

Այսպիսով , ուսումնասիրելով ընտանիք- մանկապարտեզ համագործակցությունը, կարելի է եզրահանգել, որ դաստիարակության և կրթության համար հիմնական պատասխանատվությունը կրում է ընտանիքը, իսկ մանկապարտեզը լրացնում է, լավագույն դեպքում օգնում է ծնողի սկսած աշխատանքը՝ ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր՝ երեխայի ներդաշնակ զարգացման համար: Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ և հարաբերությունները պետք է լինեն բարեկամական և գործընկերային: Ընտանիքն էլ իր հերթին պետք է ընդունի մանկապարտեզի մանկավարժական մոտեցումները և սկզբունքները:

Ծնողների կարողությունները պիտի դիտարկվեն որպես ռեսուրս և օգտագործվի ի նպաստ մանկապարտեզի:
Ծնողներին պետք է ներգրավել մանկապարտեզի ամենօրյա կյանքին՝ ներառելով նրանց տարբեր գործունեություններում:
Այն նախադպրոցական ուսումնական հաստատություններում, որտեղ ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը կարևորվում է, երեխաները ավելի ազատ են և ինքնավստահ: Բոլոր տեսակի գործընկերության հարաբերությունները ընթանում ենկողմերի հավասարության, փոխադարձ գոհունակության և հանգանքի վրա: ԵՎ այդ ամենն արտացոլվում է երեխաների տրամադրությամբ:
Այսպիսով ընտանիք և մանկապարտեփզ համատեղ խնդիրը երեխայի հայեցի դաստիարակությունն է , նրա հոգևոր աշխարհի հարստացումը, աշխարհաճանաչումը, անձի ձևավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Նախաշավիղ>> ամսագիր

2.<< Դպիր>> ամսագիր

3 Նախադպրոցական կրթություն 2-2009թ (Տաթև Գիտակրթական համալիր)2009թ

4.Ս. Մարության, Ա. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>>. Բուհական դասագիրք, Երևան 2008

5.Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենսգիրք

6.Համացանց

7.Доронова Т.Н. Взаимодействие дошкольного уьреждения с родителями. 2002г

8.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.

9.Իգնել Ս., Ջոնս Ժ. «Դպրոցի և ընտանիքի համգործակցությունը»

10.Ղույումչյան Գ. Ե. «Մանկավարժություն», գիրք 2, Երևան 2005թ.

11.Մակարենկո Ա. Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.

12.Մարության Ա. Ս., Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.

13.Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.

14.Սուխոմլինսկի Վ. Ա. «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան 1977թ.

15.Վարդանյան Վ. – Հոգեբանության մագիստրոս

16. Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր Երևան 1999թ.